


19964

302

ՀԱՅԿ

ԻԵՊԻ ՏՈՐ ԿՅԱՆՔ



891.99

Ն.ԸԶ

20 APR 2006

19 NOV 2010

894.99

6-62

ԱՆՏՈՒՆԻ

ԴԵՊՈ ԶՈՐ ԿՅԱՆՔ

ՊԱՏՄԱԾՔ

1007
30670

4302

5002

ԶԱԿԿՆԻԳԱ.

ՀԱՌԱՋԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

1926 թվի ամառը մի ամսով յես արձակուրդ վերցրի և գնացի Ծաղկաձոր՝ հանգստանալու: Այստեղ իմացա, վոր իմ նախկին ուսուցիչը Թոքախտով հիվանդ, ընկել է անկողին և ապրում է իր վերջին օրերը:

Նա ինձ իսկույն ճանաչեց, ու նրա մարած աչքերը փայլ առան ուրախության արցունքներով: Ծերունի վարժապետս հիշեց իր յերիտասարդ անցյալը և դառնությամբ խոսեց իր ներկա դրության մասին: Յես սկսեցի հուսադրել նրան, բայց նա Թերահավատությամբ ժպտեց ասելով.

— Իմ ժամերը համրած են. յես գիտեմ, վոր այլևս վոտի չեմ կանգնի: Սակայն կարևորը դա չէ... սաես, բաղդի կարգադրությունն է, վոր դու գայիր, գտնեիր ինձ, վորովհետև բան ունիմ քեզ հանձնելու: Նա խեղդվելով յերկար հաղաց. ապա կմախք ձեռքով հանեց բարձի տակից մի տեսր և տվեց ինձ.

— Դու գիտես, վոր յես առհասարակ սիրում եյի խղբգեղ. վերջերս գրել եմ մի բան, վորը կարելի չե համարել իրական զեպքերի ակնաստեսի նկարագիր: Վերցրու, կարդա, յեթե հարկավոր կհամարես, հրատարակիր, յերբ յես այլևս կենդանի չեմ լինի: Թող խորհուրդների ջանք քաղաքացիները դրանով ծանոթանան այն զգվելի իրականության հետ, վոր հատուկ եր ցարական իրավակարգին: Թող նրանք դրանով համեմատեն անցյալը ներկայի հետ և բարձր պահեն այն կարմիր դրոշը, վորը ազատություն բերեց նրանց յով հանգիստ ապահովություն ստեղծեց մեր ափերակ հայրենիքը վերաշինելու, խավար հայ գյուղը գիտություն և արվեստի լույսով պայծառացնելու և բարձրացնելու:

Հազը նորից սկսեց խեղդել նրան. յերբ նա հանգստացավ, թույլ ձայնով խնդրեց ինձ հեռանալ, գուցե կարողանա մի փոքր քնել:

Ծանր ապավորության տակ յես թողի նրան ու հեռացա:

Մեր այս տխուր հանդիպումից հետո վարժապետս յերկար չապրեց. մի լուսաթոն առավոտ նրա թոքերը դադարեցին շնչելուց, յեվ նա հավիտյան փակեց իր Թախտառները:

Այդ օրից անցել է մի ամբողջ տարի, յես իրավունք եմ համարում ընթերցողներին առաջարկել վարժապետիս պատմվածքը, վորը նկարագրում է հայ գյուղացու կյանքն ու վողբերգը անցյալում, յերբ նա դառր դատում, դատարկ եր նստում, և հաղթանակի արփիով ուրվազծված այն ծիրը, վոր աշատապրված հայ գյուղը տանում է այսօր դեպի իր լուսավոր ապագան:

ՀԵՌՈՒ ԱՆՑԵՍԱՂՈՒԾ

Մերվը կալվածատիրական գյուղ էր, թառած սեղանադիր մի բարձրավանդակի վրա: Մեջքը տված ժայռոտ սարին, նա տխուր նայում էր գետի արևմուտք, վրտեղ վերջալույսի այդ ժամին յերեացին մի խումբ ձիավորներ, վորոնք սրարշավ գյուղ եյին գալիս:

Մտնելով գյուղ, նրանք ուղղակի դիմեցին գետի ընդարձակ ըլուրը, վորի վրա, նորահարսի պես, կանգնած էր կալվածատեր Յեգոր աղա Թարխանովի յերկհարկանի մեծ ու գեղեցիկ տունը:

Բազե տեսած ծտերի նման, գյուղացիները փախան ձիավորներից և մտան իրենց աղքատիկ տները: Շներն անգամ, վոր առաջին վայրկյանին յեռանդով սկսեցին հաջել, իսկույն լռեցին, կարծես դգալով, թե յեկողը դավաառկի ահարկու պրիստով—Ալեքսանդր աղա Անդրեասովն էր:

Նա ցած թռավ Ղարաբաղի վոսկեգույն իր նժույգից և ինքնաբավական շոյեց նրա գեղեցիկ բաշն ու վիզը, վորի վրա տեղ-տեղ յերևում եյին փրփուր տված քրտինքի բծեր:

Յեգոր աղան մոտ վաղեց պրիստովի յոթ փթանոց կնոջը և ոգնեց նրան՝ իջնել ձիուց: Իջան նաև մյուս հյուրերը, վորոնց մեջ պրիստովն աչքի յեր ընկնում իր հաղթանդամ բոյ ու բուսաթով, ձեռքին բռնած մի յերկար դոդալ փայտ:

Գավառում քիչ մարդ կար, վոր տեսած չլիներ պատմական այդ դողալի համը... Անդրեասով աղան սովորութեան ունեի՝ իրեն դիմող համարյա բոլոր դանգատավորներին նախ՝ յեզան պես քցել գետին և այդ դողալով մի լավ ջարդել, ապա լսել նրանց, համոզված, վոր դրանից հետո նրանք սուտ բան չեն ասի...

Պրիստովի կինը—Նատալիա խանումը, իր գորշ շորերի մեջ նման էր շաքարի տակառի, վորի վրա անմիջապես կաած էր փոքրիկ գլուխը, վորովհետև ճարպի ծալքերի մեջ կորած կարճ վիզը չէր յերևում ամենեին:

Նատալիա խանումի կողքից, տիրասեր շան նման ծուլ-ծուլ գալով, գնում էր Յեգոր աղան: Սա միջին տարիքի, կարճահասակ մի մարդ էր, վորի ածիլած ձախ թշի խալի վրա թողած էր մի փնջիկ մազ: Նրա թավ հոնքերի տակ պսպղում եյին մի դուշգ փոքրիկ խաթ աչքեր, վորոնց մեջ փայլում էր յերջանիութեանը:

Յեգոր աղան այդ ուրը մկրտում էր իր նորածին անդրանիկ վորդուն, վորի կնքահայրն էր լինելու պրիստովը: Նա յերջանիկ էր յերկու պատճառով. նախ, վոր յերկար տարիներ սպասելուց հետո, վերջապես ժառանգ ունեցավ, յերկրորդ, վոր այդ ժառանգն ավելի մոտեցնում, ավելի մոտեմացնում էր նրան դավաառկի տեր ու տնորեն պրիստովի հետ: Վերջինս դառնում էր «տանու» մարդ, և սրա հովանավորութեամբ նա կարող էր այսուհետև իր գյուղացիների հյուսթը քամել ճիշտ այնպես, ինչպես մանդյանայի միջոցով քամում են խաղողի ջեջը:

Սպիտակ չերքեստի հագած կարո և Մինաս ջահել ծառաների ոգնութեամբ հյուրերը փոշուց մաքրվելուց, լվացվելուց հետո տեղավորվեցին թարմ ու պաղ մրգերով լեցուն սեղանների շուրջը, սպիտակ ներկած պատշգամբում, վոր

արծաթե գոտու պէս բոլորակի պատել եր տունը չորս կողմից:

— Ինչ անտանելի բան ե ձեր գյուղի ճանապարհը. դար սև փոս, քար ու փոշի միայն: Յեթե ինձ հազար թուման վոսկի տալին, յես այդ ճանապարհով չեյի անցնի. բայց անցա ու յեկա ձեր տուն, վոքովհետև սիրում եմ քեզ,—ասաց Նատալիա խանումը, իր մոտ թաթով շոյելով տանտիկնոջ բարակ թևը:

— Ձեր այդ շնորհ հավիտյան չենք մոռանա յես ու Հեղուշը,—կնոջ փոխարեն պատասխանեց Յեգոր աղան, խորը գլուխ տալով:

Յերկար թերթերունքների սև շրջանակի մեջ անհանդիստ շարժվեցին Հեղուշի կապույտ աչիքը, իսկ դժգոյն նուրբ դեմքը բռնկվեց խառ կարմիր գույնով, վոր շփոթվելու նշան եր: Նրա վարդագույն շրթունքները դողդողացին ու նա շշնջաց.

— Յեթե ձեզ պէս մարդիկ յերբեմն տեսության չգան մեզ և թարմություն չբերեն իրենց հետ, մենք կարող ենք խեղդվել գյուղական այս ճահճում:

— Իսկ յես գյուղական այդ ճահիճը սիրում եմ, վորովհետև այստեղ ամեն բան կարելի յե անել և հանգիստ քնել. գյուղը ախու ե, գյուղացիք այդտեղ հավաքված եշեր են, վորոնց ազատ կարող ես համ բռնել, համ նստել,—սեխի պատառը բերանը դնելով, մշտաց պրիստավը և շոյեց կրծքի վրա ճուղ տված իր փաթեթամ միքուքը:

— Յես սիրում եմ գյուղացիների պարզ նիստ ու կացը, նրանց հարգալից վերաբերմունքը դեպի մեծավորները և իշխանավորները,—փիլիսոփայեց վեց աղջկա հայր աքցիղ Նովիկովը, վորը «պարզելի» անվան տակ գյուղացիներից

յուղ ու պանիր եր կաշառք վերցնում և այդ բանը համարում եր հարգանքի նշան:

— Ինչ վերաբերում ե ինձ, պիտի խոստովանվեմ, վոր յես ամենից ավելի սիրում եմ գյուղական կարմրաթուշ ջահել հարս ու աղջիկներին, վորոնց հասարակ հագուստի տակ պարզ յերևում են նրանց փոքրիկ շամամները,—աչքերը ճըպճըպացնելով խոսեց ամուրի ծեր քննիչը: Սա հայտնի յեր ամբողջ գավառում իր ափեղ-ցփեղ խոսելով, թեև նրա խոսքն ու գործը իրար չեյին բռնում, նա ավելի շուտ գինեմոլ եր, քան կնամոլ:

— Այսոր յերեկոյեան դուք բախտ կունենաք այդ շամամները մոտիկից դիտելու, նույնիսկ դրանց հոտը քաշելու, վորովհետև մի խումբ հարս ու աղջիկ պիտի պարեն ու յերգեն մկրտությունից հետո,—հայտարարեց Յեգոր աղան, նայելով Նատալիա խանումին և կնոջը, վորոնք կամացուկ դրուցում եյին իրար հետ, ուշք չդարձնելով, թե ինչ են ասում տղամարդիկ:

— Սրդյոք քո սևաչյա կրակոտ քրդուհիներն ել կլինեն, վոր անցյալ տարի յայլաղում ամբողջ գիշեր պարում ու յերգում եյին,—հարցրեց պրիստավը. նրանցից մեծը ժպտալիս՝ աջ թշի վրա մի փոքրիկ փոս եր գոյանում, այնքան գրավիչ, վոր...

Նա խոսքը չվերջացրեց, այլ ձեռքի մատները ժողոված մոտեցրեց բերնին ու ձայնով համբուրեց նրանց ծայրերը:

— Քրդուհիներ Սլթեն ու Ջալխեն ել կլինեն, յերգասաց Համոն ել, բլուլ փչող Ավոն ել,—թվեց մեկ-մեկ Յեգոր աղան և ինքնաբավական վոլորեց իր խալի վրայի փնջիկը: Յես մի ենպես քեֆ ցույց տամ ձեզ, վոր յերկար ժամանակ համը բերաններդ մնա: Իսկ մինչև այդ, խնդրեմ, շնորհ

արեք, տեսեք այն նոր տունը, վոր յես շինում եմ իմ Բուր-
թելիս, իմ բալիկիս համար:

Պատշգամբում մնացին միայն Նատալիա խանութն ու
Հեղուշը: Տղամարդկանց գնալուց հետո լուռ նայում էին
տան առաջի կլոր հրապարակին, վորտեղ յերևաց մի տարու-
րինակ ծերունի, շրջապատված գյուղական մանր յերեխա-
ներով:

Նա միջահասակ մարդ էր, մոտ ութսուն տարեկան,
բայց դեռ միանգամայն աշխույժ ու առույգ: Գլխի սպիտակ,
սակայն կեղտից դեղնած, մազերը խառն թափվել էին թի-
կունքին ու կրծքին, վորը կիսով չափ ծածկված էր նրա
թիակածակայն միրուքով: Ծերունու ամբողջ հագուստը կաղ-
մում էր տեղական շալից կարված այն «յաբան», վոր հա-
նում էր մինչև մերկ ծնկները: Նրա վոտները բորել էին
ու ճաքճաքված: Նա ուսին ուներ կտավն մի տոպրակ, լի
չոր հացի փշրանքներով ու փտած մրգերով, վոր նա հավա-
քում էր այգիների ճանապարհների վրա կախված ծառերի
տակից: Նրա ձեռքին կար յերկար մի մահակ՝ կեռ գլխով:

Ծերունին գնում էր, քթի տակ մրմուռով ինչ վոր
անորոշ բառեր: Յերբեմն նա հետ էր դառնում ու ձեռքի
մահակով սպառնում էր յերեխաներին. բայց նրա հերոսոտ
դեմքը խակոյն փայլում էր բարի ծիծաղով, վորից սիրտ ա-
ռած, յերեխաներն ավելի էին մոտենում նրան, բաշջում
էին նրա փեշերից, տոպրակից և խնդրում էին, վոր նա
յերգի:

Նատալիա խանութը սաստիկ հետաքրքրված տեսարա-
նով, վոտի յերակ և ուսը դեմ տալով զատշգամբի սյունին,
աչքը չէր հեռացնում այդ անսովոր մարդուց: Հանկարծ ծե-
րունին արձակեց մի վայրենի ճիչ, ձեռները պարզեց դեպի

դիմացի: ջրվեժը և մի քանի բոսի ինքնամոռացութամբ քա-
րացավ:

Մոտ քսան սաժեն բարձրության ժայռից թափվող
ջրվեժը, վերջալույսի վոսկի շողերի տակ, փելվում, ծեփին
էր տալիս, ասես—վոսկու ու արծաթի հալոցք լինեք, վոր
հսկայական ցնցուղի պես—շաղալեն հոսում, կորչում էր խոր
ձորի մեջ:

Նատալիա խանութը մեկ նայում էր բնության այս
հրաշքներին, մեկ տարրերնակ այդ ծերուկին, վոր կարկտա-
բեր ամպի պես մթնտել էր և աչքը չէր հեռացնում ջր-
վեժից:

Հանկարծ նա սկսեց յերգել. բայց յերգը վորոշ յեղա-
նակ չունեւ և նման էր բորձրածայն արտասանության,
վորի ամեն մի խոսքը պարզ հասնում էր Նատալիա խանու-
թին ու նրա հաստ թևը բռնած գեղեցիկ Հեղուշին:

«Արծաթ ջրվեժ, պաղ ջրվեժ,
Կյանքդ խինդ ու խնդ, ջրվեժ,
Թե՛ս սիրտս ցողի կարոտ,
Ցողես, շաղես, շող ջրվեժ:
Յես Դավոն եմ մերվեցի,
Սիմա, քեզնով գերվեցի,
Ճրագ տեսած թիթեռի պես,
Կրակն ընկա, երվեցի...»

Յերգը վերջացնելուց հետո ծերունին քահ-քահ ծիծա-
ղեց և վաղեց դեպի ջրվեժը, յերեխաները հրհալով հետևե-
ցին նրան:

— Ով է դա, Հեղուշ,—հարցրեց Նատալիա խանութը,
տպշած ու վախեցած:

— Դա իմ կեսրոջ գոհն է. կուզե՞ս պատմեմ, թե ինչպես:

— Պատմի՛ր, հետաքրքիր ե: Բայց չգիտեմ ինչն է, յես
ամբողջապես դողում եմ:

— Այս թշվառ ծերուկը ջահել ժամանակ սիրելի է իրենց հարեանի աղջկան՝ վոսկեծամ Սիմային. Սիման ել սիրելի է նրան, վոր դարբին Մհերի աշակերտն երևալ է գյուղի քաջ յերիտասարդներից մեկը: Ծնողները դեմ չեն լինում իրենց դավանների սիրո կապին, և ձմեռվա մի գեղեցիկ որ գյուղում ընդունված կարգով, անշուշտ պիտի կապեյին նրանց «կանաչ-կարմիրը», յեթե մեջ չընկներ իմ կեսուրը: Սա յերբ իմանում ե, վոր աղջիկ-տղա իրար սիրում և ծածուկ տեսակցում են, կատաղությունից քիչ ե մնում ճաքի: Առանց յերկար մտածելու, նա վերցնում, Սիմային ամուսնացնում ե Բարազեղացի Փալանդուզ Ռհանի տղա՝ խուլ Սամսոնի հետ, վորպեսզի պատժած լինի սիրած տղի վզովը ընկնող «լիրը» աղջկան: Սիման յերկար որեր անձնատուր չի լինում իր խուլ մարդուն և վերջը նրան թողնում ու փախչում ե հորանց տուն. այստեղ հոր վոտներն ընկած, նա լաց ե լինում և ասում.

«Ա՛խ, ա՛խ ջան, յես գլուխս կսպանեմ, խուլ Սիմոնին կնություն չեմ անի. յես խոսք եմ տվել Դավոյին, նրան ել կառնեմ»: — Կեսուրիս կատաղությունը չափից անցնում ե. նա Սիմային հրամայում ե անմիջապես հետ դառնալ մարդու մոտ, թե չի ուզում, վոր Դավոյին կապկպած հանձնեն մովրդովն՝ Սիբիր քշելու նրան...»

Այդ սպառնալիքն ազդում ե խեղճ աղջկա վրա, և նա քուռ ու փոշման դնում ե դեպի ատելի մարդու գյուղը: Ջրվեժի կողքով անցնելիս, նա կանգնում ե, վոր մեկ ել նայի այն տնակին, վորտեղ մղկտալեն թողել եր իր սիրած Դավոյին: Ջահել աղջկա սերն ալիւլի գորեղ ե լինում, քան մահվան վախը. նա ջրվեժի ժայռից իրեն նետում ե անդունդը, վոր խուլ Սամսոնի կինը չդառնա, յեթի իրեն վիճակված չե թաղան Դավոյի կինը դառնալ:

Այդ բանը յերբ իմանում ե Դավոն, մուրճով խփում ե իր գլխին, վոր ինքնասպանություն կատարի, բայց անհաջող. նրա ծանր վերքը թեև լավանում ե, սակայն անհույս հիվանդանում ե նրա խելքը, նրա բանականությունը. նա դառնում ե «գիժ Դավո», վորին գյուղի լակոտները, այ այսպես, սաղ որը, գազանի նման շրջապատած, գրգռում, հանդիստ չեն տալիս: Եդ սարն ու ջրվեժն ել այնուհետև կոչվում են Սիմայի սար, Սիմայի ջրվեժ, վորից մեր գյուղացիք չեն ոգտվում, համարելով այն անիծած...»

— Ինչ տխուր պատմություն ե դա, Հեղուշ, բայց միթե գյուղացիներն ել սիրելի գիտեն:

— Սերը սրտի անուշ յերգն ե, իսկ սիրտ ամեն մարդունի, նատալիս խանում:

Դեռ նոր եր մութն ընկել, յերբ Բոյաղչոնց յերգասաց Համոն կալում իր որվա աշխատանքը վերջացրեց, թեղը հավաքեց, վոր լուսածաղին քամով երանի. Համոն թեղի չորս բոլորն ալիւց, քառեջքը խրեց նրա մեջ ու մտալ իր ագքատիկ խրճիթը և վառեց սև նավթի ճրագը:

Հողե հատակին, դռանը մոտիկ, կտալե գոշակի վրա պառկել եր Նազոն, Համոյի կինը, վորին համագյուղացիք կպցրել էյին «խումար» անունը, նրա գրավիչ աչք-ունքի համար:

Մի ամբողջ ամիս խումար Նազոն հիվանդ եր տիֆով. նրա վարդագույն թշերը գունատվել, յերեսի վոսկորները ցցվել էյին, թեև կամար ու բարակ սև հոնքերի տակ առաջվա պես անուշ կրակով վառվում էյին նրա նշաճև աչքերը:

Մոր կողքին, խուճուճ մաղերով գլուխը դրած գյուղական տափակ բարձին, մեջքի վրա քնել եր փոքրիկ Դուրգենը, բերանը բաց. նա շնչում եր ղվարությամբ, դեմքն

եղ շարունակ ցնցվում եր, վորովհետև դիֆտերիաը խեղդում եր նրա մանկական բուգը:

Մոր վտանքերի մոտ, թաղիքի վրա չոքել եր հինգ տարեկան շիկահեր Մարոն, վորի կապույտ աչերի մեջ լճացել եր մի խորունկ թախիժ. նա յերկյուղածությամբ նայում եր մորը, սպասելով նրա խոսքին, վոր կատարի նրա ցանկությունը:

Համոն մոտեցավ վորդուն, կռացավ նրա դեմքի վրա և տեսնելով, վոր նա քնած ե, հարցրեց կնոջը.

— Վաղճւց ե քնել Գուրգենը:

— Նոր քնեց. կամաց, յերեխաս չգարթնի,—պատասխանեց հիվանդ կինը,—ավելի շուտ պոռչների շարժումով, քան ձայնով:

— Իսկ դու վճնց ես:

— Վճնց պիտի լինեմ. վճչ լավանում եմ, վճչ ել մեռնում, վոր համ յնա աղատվեմ, համ ել քեզ աղատեմ:

— Ի՞նչ ես հիմար բաներ խոսում. դու վոր մեռնես, յերեխաներդ ձւմ ես թողնելու:

— Նրանց հորը և այն կնոջը, վոր այս տան մեջ կրճնի իմ տեղը,—պատասխանեց Նազոն, և նրա աչերը թաց ելան այդ մտքից:

— Խորթ մոր մեծացրած վորբի սիրտը արեւ չի տեսնում, իսկ առանց արեւի կյանք չկա:

— Եղ եղպես ե, համա ի՞նչ անեմ, վոր չեմ...

Նազոն չկարողացավ վերջացնել խոսքը. տաքությունից նրա լեզուն չորացել, կպել եր քիմքին: Նա դառնությամբ «ախ» քաշեց և ծումեց շրթունքները: Փոքրիկ Մարոյին ծանոթ եր այդ շարժումը. նա իր նիհար թաթիկներով ջրի կավի ամանը մոտեցրեց մոր պապակ, պոռչներին, բախտավոր, վոր կատարում ե իր ազիզ նախի ցանկությունը:

Այդ րոպեյին դուռը բացվեց, և ներս մտավ գլավին Կարապետի թուրք յեսաուլ Զաֆարը:

— Բարի էրիկուն, ախպեր Համո:

— Աստծու բարին, բարով եկար, Զաֆար ջան, համեցեք, նստի՛ր: Խեր ըլի, ի՞նչ կա:

— Փառք իրեն, խեր ե. Յեզոր աղի անունից գլավին հրամայում ե քեզ, ես սնաթիս եթանք աղենց տուն, վոր ենտեղ յերդ ասես և աղա ու խանում դոնադների սիրտը ուրախացնես: Յեզոր աղեն եսոր մկրտում ե իր աղին և մաղալու բան, անունը դնում ե Բրթել:

— Բրթել չե, Բուրթել, Զաֆար:

— Այ՛ղի, մի բան ե, իքիսընադա ուչ նալլաթ: Իմ իմանալով, հայի անունը պիտի ըլի Գրիգոր, յա Կարապետ. ել Բուրթել-Մուրթել վճրն ա: Մախլաս. դե վեր, դե վեր, եթանք:

— Զաֆար ջան, իմ եղ հալին հենց յերգն ե պակաս:

— Ընչի՞, ի՞նչ կա վոր:

— Ել ի՞նչ լինի. երկու ամիս առաջ, տարի գլխին, կոյժակը խփեց, ածուխ դարձրեց կնոջս մի հատիկ թաուլան ախպորը, վոր բերդի պես կանգնած եր մեջքիս: Գարնան աղարին յերկու յեղս մի շաբթում սասկեց, լուծս մնաց աղարին յերկու յեղս մի շաբթում: Աղդաղի հանդում անիրավ գետնին, աչքս խալխի դռանը: Սղդաղի հանդում անիրավ մուկը մենակ իմ ցորենի արտը տեսավ և թամբդ կտրեց: Եղ բողբոջ հերիք չեմ, հիմա յեւ աշնան դործի նեղ միջոցին, կինս ու յերեխաս հիվանդ ընկել են տեղաշորի մեջ, անճար, անգլուման: Ել ի՞նչ ես ուզում, վոր լինի, Զաֆար: Իմ սիրտը յերգելու ենպես եղս ու հավիս ունի, ինչպես կախաղանի տակ կանգնած մահապարտը:

— Քո քեֆն ու ահվալը ձվ ե հարցնում, յերբ աղաները ուզում են յերգ լսել. դու վոր կարողանայիր քո

քեֆով ապրել, հո գեղացի չեյիր լինի, են ել աղալըդ գեղացի:

— Դրուստ ես ասում, Ջաֆար. թե թագավորական գեղացու մեջքից մետակ կաշի յեն գոլ քաշում, հանում, աղալըդ գեղացու մեջքից հո երկու տակ կաշի յեն հանում:

— Եդպես վոր չըլեր, Համո ախպեր, բա որհնած հողը, ռանչպարությունը թողած, յես կերթայի յեսավո՞ւլ կդառնայի: Թե ձեր Յեգոր աղան սովորական կրակ ե, մեր Ռահիմ աղան հո բաբելական կրակ ե, վոր չորհ ու թացը միասին ե փոթոթում, խորովում: Ինչ մեծավոր, յա նաչալ-նիյ-փրիստավ ե՞լ վոր չեն գալիս, մեր աղաները երկու որում նրանց, «աստամները համրում», հոգիներն առնում են իրենց ափի մեջ, ինչ ուզում, են ել անում են:

— Անտերի փողը, կաշառքը գազանին ել կակղեցնում, դարձնում են տանու շուն, վորին ում վրա ուզենաս, կարող ես «հայ» տալ, հաջեցնել, Ջաֆար: Փողը մարդուս խիղճը սպանում, լեզուն կտրում, նրան անում ե գեանի հող, ինչքան քեֆդ կտա, կոխկրտիր, տրորիր, նա չի բողոքի, ձեն չի տա: Եդ նույն փողը վոչինչ մարդուն անում ե արփ-ասլան, վորի ատամը ամեն բան կտրում, ամեն բան աղում ե... Դե, ապա բեր, Յեգոր-Ռահիմ աղաների հաբստությունը տուր ինձ ու ինքդ կանղնիր, թամաշա տրա, թե վոնց եմ պար ածում յես քո ջանավար Անդրիասով պրիստավներին, Ջաֆար ջան:

— Նրանց հաբստությունը դու չունես, դրա համար ել համեցիր, նրանց դռանը կանղնիր ու խաղ ասա, թեկուզ սրտիցդ արուն ե կաթում: Յերգիր, ուրախացրու նրանց և եդ աչքերովդ տես, թե ինչ լազաթով ուտում, խմում են նրանք, յերբ յես ու դու կորեկ հացով ենք սեացնում մեր

որը... Յե՛ր, Համո ախպեր, յե՛ր, եթանք. թե վերև աստված կա, մեզ ել արե կծագի:— Չգիտեմ, աստված կա, թե չկա, համա, լավ ու վատի հատուցում կա, Ջաֆար. գնանք, ճարս լճնչ ե...

Սշնանային գիշերը լուսանալու մոտ եր. որվա աշխատանքից հոգնած ու խորը քուն մտած Մերվն սկսել եր կանաչ-կամաց դարթնել, յեռքցալ: Սեպտեմբերյան մթնշաղ առավոտի պաղ շունչը տաք գործի յեր կանչում չարքաշ մերվեցիներին: Սրանք քնաթաթախ դուրս եյին գալիս իրենց խրճիթներից և մի վայրկյան ալամա կանգնում, նայում եյին դեպի աղայի տունը, վորտեղ կալվածատեր հարուստը և սրա պաշտպան իշխանավորները դեռ շարունակում եյին իրենց քեֆը: Նրանք ամենքը հարբել եյին և այլևս չեյին լսում՝ վոչ Սվոյին, վորի բլուրը լալիս, մեղկոտում եր, վոչ Համոյին, վորի յերգերի մեջ մեկ հնչում եր շինականի հեծկտանքը, մեկ նրա սիրտ ուրախ ձիչը, մեկ ել գալիք որերի լուսաշաղ հույսը:

Պրիստավը, քննիչն ու Յեգոր աղան Ջալիսեյի և Սլթեյի մատները արորելով իրենց ձեռների մեջ, շրջան կաղմած, պարում եյին, ձայնակցում եյին քրդուհիներին՝ պարյերգի կրկնակը յերգելիս:

«Լե բնո, լե, լե,
Լե բնո, լե, ռաբան հոլի»:

Նատալիա խանումի կողքին նստած հաստափոր տերտերը գինու բաժակը դատարկելուց հետո շարտեց հատակին, ապա դառնալով իրենց սպասավորող Մինաս ծառային, բացականչեց.

«Վինո ալիյ,
Ստական մալիյ»:

Նե խաչու,
Ճանըս ալչու,
Մինաս,
Բալաս,
Դաւայ կարաս,
Սաղանա յարաս...

Նատալյա խանումը և աղցիդ Նովիկովը հիացած քահանայի սրախոսությունից, ծափ տվին ու հրհուսցին, բացականչելով. «բռնվո, բռնվո»:

Համոն բաց պատուհանից նայեց դեպի արեւելք, վորտեղ թփրտալով շողշողում էր լուսաստղը. անուշ շնդշնդում էր առավոտյան հովը: Համոն հիշեց կալի իր թեղը, վորը նա հիմա պետք է սկսած լինե՛ր երանել, և նրա սիրտը կուշ յիկավ փսոսանքի տխուր հուշգրով...

Ամբողջ յերկու շաբաթ էր անցել այն ուրից, յերբ Յեզոր ազա Թարխանովը քեֆ էր սարքել իր վորդու մկերտության պատճառով: Արդեն կես ուր էր, բայց դուրսը մութ ու մռայլ, վորովհետև ամպերը պատել էին յերկինքը և ծածկել արևի յերեսը:

Մութ ու մռայլ էր նաև Յեզոր աղան. նա շտապ դնում, գալիս էր սենյակում և բարձրաձայն հայնոյում.

— Լիրբ, անդգամներ... շուն, շան վորդիք... Պոնց կերան ջորուս գլուխը... այ, շունը կրծի ձեր աղիդ մեռլի գլուխը... Ագոավները վորփրեն ձեր աչքերը...

Յեզոր աղան եղպես սրտանց հայնոյում էր ու անխնայ իր ծառաներին, և ահա—ինչո՞ւ. անասունը ջուր տանելիս, մորից հետ մնացած մի տարեկան ջորին վազում է նրան հասնելու, բայց սոթ է տալիս, ընկնում է, վորտը կոտրվում է: Աղան այդ բանին չէր հավատում, և համոզված էր, վոր

ծառաները քար քցել, ջորու վորտը ջարդել են, ուստի եղպես «որհնում» էր նրանց:

Այդ ընդեյին ներս մտավ կառավարիչը և հայտնեց Յեզոր աղային, թե գյուղացիք հավաքվել, խնդրում են նրան:

— Ի՞նչ կա, ի՞նչ են ուզում եդ խոզերը:

— Ինձ բան չեն ասում, քեզ հետ են ուզում խոսել:

Թարխանովի դեմքն ավելի մթնեց. ընդհանրապես լռությունից հետո նա վճռական յեղավ պատշգամբ, ինչպես վանդակից դուրս թռած գազան:

Բակում հավաքված գյուղացիները տեսնելով նրան, դիտարկները հանեցին և տեղերում լուռ շարժվեցին, վորը կարելի չէր համարել իբրև բարևի արտահայտություն:

Յեզոր աղան խոժոռ նայեց իր գյուղացիներին և ուղղելով յերկար քեֆերը՝ հարցրեց.

— Հը՛, ի՞նչ եք հրամայում:

— Խնդրում ենք, աղա, չենք հրամայում, — առաջ անցնելով պատասխանեց գյուղում ամենքից հարգված Մուրադ բիձան:

— Ի՞նչ եք խնդրում:

— Խնդրում ենք, վոր գարնանը մեզ տված սերմացուն ես տարի չառնես, թողնես գալ տարվան:

Իսկ մեր պայմանը վոնց է:

— Փթին փութ, կալը վերջանալիս:

Բա ել ի՞նչ եք պարապ խոսում:

— Աղա, դու գիտես, վոր կարկուտը և չորությունը փչացրին բերքը. քո պարտքը տալու կերպ չունենք:

— Կարկուտը և չորությունը իմ արտերի կողքով են անցել, իսկ ձերի վրայո՞վ:

— Հնա, աղա, կարկուտի դամարը քո արտերին չբռնեց, իսկ չորությունից հեշ նրանց վեշը չեւր, վորովհետեւ նրանք ջրովի յեն, դեմի հանդում դու հող չունես,— խոսեց Բոյախչոնց Համոն, չարացած:

— Ասելդ ի՞նչ ե, պարտքերիցդ հրաժարվում եք, հմ:

— Ասելս եմ ե, վոր քյուլֆաթներս սոված եմ, և քո սերմացուն հիմա տալ չենք կարող:

— Սով-մով չգիտեմ յես. եսոր և յեթ ձեր տարած սերմացուն իր վրադիր շահով ինքներդ կըրեք ու կլցնեք ամբարները: Ել խոսելն ավելորդ ե, հայդա:

— Ընչի՞, եղ վոր որենքում ե գրված, վոր ցորենը քո ամբարներում լցված փախի, իսկ մեր կին ու յերեխան սովից կտորվեն,— վրա բերեց Համոն, ավելի չարացած:

— Իսկ վոր որենքում ե գրված, վոր յես պարտավոր եմ կերակրել ձեր կին ու յերեխային. և ո՞վ ե ասում ձեզ, վոր կին ու յերեխա ունենանք, յեթե դրանց պահել չեք կարող,— վորոտաց Յեգոր աղան:

— Բա ո՞վ ե ասում մեզ՝ սաղ գեղով տանջվել, շան որ քաշել, վոր ինչ ե՞ Յեգոր աղան մատը մատին չխփի և թագավորի պես ապրի,— բացականչեց Համոն՝ թևերը չափ քցելով:

— Թագավորական որենքը և իշխանությունը,— բղավեց կալվածատերը:— Իսկ յեթե դու կհամարձակվես եղպես լըր-բաբար խոսել, յես կկտրեմ քո լեզուն և կքցեմ շներին:

— Գեղ վոր մնա, դու մեր գլուխն ել կկտրես, կքցես քո շներին, համա...

— Համա ի՞նչ, շուն շան վորդի. ձեռս բռնող կամ, թե վախում եմ քեզնից: Բռնեթ ես ուզում քցել, հմ... Առ ահա, քեզ բռնեթ, ճռուաց Յեգոր աղան և պաշտգամբում յեղած

աղյուսի կտորները շարտեց դեպի գյուղացիք: Դրա հետ միասին նա ձայն տվեց.—

— Մինաս, Կարո, թվանքս բերեք, յես եղ կապ կըտրածներին գյուլլախորով անեմ...

Գյուղացիներեց մի քանի հոգի փախան, մյուսներն, ընդհակառակը, գաղաղած, գետնից վերցրին կալվածատիրոջ ձգած աղյուսները, վոր նետեն դեպի նա, բայց Յեգոր աղան չկար. տեսնելով, վոր ծառաներն իսկույն չերևացին, նա վաղեց սենյակ և այնտեղից դուրս յեկավ, բերդանն ու փամփուշտակալը ձեռքին: Նրա առաջը կտրեց կառավարելը և փորձեց խիլ նրանից հրացանը, վոր հանկարծ բացվեց և գնդակն անցավ գյուղացիների գլխի վրայով:

Այդ պատահական տրաքոցը նման եր կայծի, վոր ընկնում ե վառողի մեջ և բռնկեցնում այն: Յեթե մինչե այդ կային մարդիկ, վոր Համոյի արածին այնքան ել չեյին հավանում, այժմ արդեն ամենքն ել զգացին, վոր իրենց աղայի համար նրա մի տարեկան ջորին ավելի արժե, քան իրենք: Այդ պատճառով, հայհոյանքի հեղեղ թափելով բերաններից, նրանք վաղեցին դեպի վեր.— պատշգամբը:

Այստեղ նրանք խիցին հրացանը Յեգոր աղայի ձեռքից և դռնդաղով խփեցին նրա գլխին, վորեց չռալով թափվեց կարմիր արյունը: Կալվածատերը ուշքը կորցրած, փախեց գետնին: Կատաղած գյուղացիք սկսեցին նրան տրորել իրենց վրտների տակ, մեջ խառնելով նաև կառավարչին, վորը շատ անգամ եր գաղել նրանց:

Այդ սուր ու դմրոցի, աղմուկի վրա դուրս վաղեց Հեղուշ խանումը, յերեխան գրկում: Նա չոքեց գյուղացիների առաջ և լացակոտուր ասաց.

— Մարդուս սպանելուց հետո, սպանեցեք ինձ ել, յերեխա ել: Ո՛յ, եղ ի՞նչ արեք, եղ ի՞նչ սե որի հաստ յես...

Գյուղացիների վրա, ասես, սառը ջուր ածեցին. նրանք մի վայրկյան լուռ, անշարժ մեկվեցին՝ իրենց տեղերում, շուտ յեկան և գլխիկոր, փողման հեռացան իրար հետևից։

Մերվեցիների այդ արարմունքի լուրը, կարծես քամու թևերով, հենց նույն ուրը հասավ Անդրիասով պրիստավին։ Սա հետևյալ առավոտ, ինն կողակների ու ստրաժնիկների հետ, մտավ Մերվ և մի ժամում բռնեց բոլոր տղամարդկանց ու վոչխարի հոտի պես քրեց նրանց, ժողովեց կալվածատիրոջ բակը։

Ամբողջ գյուղը դարձավ սգի մի մեծ տուն, վորտեղ լաց ու շիվանի ձայնից գետինը տնքում էր, յերկինքը թնդում։

Ալեքսանդր աղա Անդրիասովը, զոդալը ձևեցին, մի քանի լուպե լուռ գնում, գալիս էր ձերբակալվածների առաջ և ազահարար ծխում։ Հանկարծ նա կանգնեց և ցուցամատի շարժումով իր մոտ կանչեց Մուրադ բիձային։ Սա գլխարկը հանած, մոտեցավ նրան ու յերկու քայլի վրա կանգ առավ։

Պրիստավը ձեռքը մեկնեց, բռնեց ձերուհու սպիտակ միքուքը, ուժեղ ցնցեց ու թափ տվեց. նրա ափում մնաց մի պուրակ մաղ, վորը նա շարտեց գետին, գոռալով.

— Վոչխարի նեհրի, քոփազ, քո ջիլերն եսպես մեկ-մեկ կփետեմ, կհանեմ, վոր մեյիդի պես վեր ընկնես փալասի տակ, սասկես և գյուղի մեջ բունթ չսարքես։

— Ների՛ր, աղա, վերև աստված, ներքև դու, ների՛ր։ Ինձ սպանիր, ինձ փառչալամիշ արա, գեղականին բաղձիր, նրանց յերեխանցը ուհմ արի, խնայիր,—թոթովեց Մուրադ բիձան և ծունկ չոքեց պրիստավի դիմաց։

Անդրիասովը զոդալը ձոճեց ողի մեջ և ամբողջ թափով իջեցրեց ձերուհու ուսերին. խեղճ մարդը հարվածի զոռից փռվեց բերնի վրա հողերի մեջ, ինչպես մեջքից սպանված գորտը։

— Ի՞նչ նանի ջիդյարը... Բա եղ հալո՞վ ես բունթ սարքում տերության դեմ, յերբ փայտի մի զարկի յեկ չես դիմանում, այ մոռնդովիկ շան վորդի,—մրաաց պրիստավը և վոտով դեմ հրեց ձերուհուն։

Այդ միջոցին կառավարիչը մոտեցավ Անդրիասովին ու ինչ վոր փափսաց նրա ախանջին։

Պրիստավի աչքերը վառվեցին անզուսպ կատաղությամբ, և նա վիրավոր առյուծի նման մոռնաց.

— Բոյախչոնց Համո, համեցիր այստեղ։

Համոն վճռական քայլերով առաջացավ դեպի իր դահիճը և կանգնեց, շեշտակի նայելով նրա կարմրած դեմքին։

— Ա՛, մենք ծանոթ ենք,—բացականչեց պրիստավը ծաղրով. միլրտությանը դու շատ լավ տաղ եյիր ասում և մեզ ուրախացնում։ Են ժամանակ դու յերգում եյիր ժողովրդական յերգեր, յերեկ յերգել ես «հեղափոխական» յերգեր. տեսնե՞ք այժմ ինչ յերգ ես յերգելու, փեղավանդ...

Նա նշան արավ, և ստրաժնիկները Համոյին պառկեցրին յերեսի վրա գետնին, ցած քաշելով նրա վոտաշորը։ Նրանցից մեկը նստեց Համոյի գլխին, իսկ մյուսը—վոտ-ներին։

— Յես քեզանից տիկ պիտի հանեմ, եշ կոտող, հա՛րամ զադա,—վոռնաց Անդրիասովը և բարձրացրեց զոդալը։

— Վա՛յ, ափոյիս սպանում են,—լեղապատառ ճչաց փոքրիկ Մարոն և անհուշ փռվեց գետնին...

— Մարոյի պես շատ փոքրիկներ արուն-արցունք լացին այդ ուր, բայց դա չազատեց նրանց հայրերին Ալեք-

սանդը աղա Անդրեասովի պատմական զոդալի հարվածներից, վորոնց տեղն իսկույն կարմրում եր, ասես մեջքի վրա շահմար ոձ պառկած լիներ:

Անան պաղ արևը թեքվում եր դեպի իր մուտքը, յերբ պրիստավը վերջացրեց իր զոդալի սրբազան արարողութիւնը:

Իրանից հետո, նա Յեզոր աղայի ու նրա կառավարչի ցուցմունքներով, կապեց «բունտովչիկ» գյուղացիներէից յերեսուն հոգու և մարակի տակ տալով, քչեց նրանց իր վարչատեղին:

Ամբողջ ութ ամիս այստեղ և նահանգական բանտում նստելուց հետո, վերջապես, նշանակվեց «բունտովչիկ» մերվեցիների դատը: Գյուղացիք հնարավորութիւն չունեցան մասնավոր փաստաբան բռնելու, դրա համար նրանց պաշտպանում եր պետական պաշտպանը: Սա համաձայնվելով դատախազի մեղադրական ակտի բոլոր կետերի հետ, խնդրեց միայն դատավորների և որենքի ներողամտութիւնը մեղադրյալների վերաբերմամբ:

Դատարանը մերվեցիներից ինն հոգու բոլորովին արդարացրեց, քսան հոգու դատապարտեց յերկու տարով բանտարկության, իսկ Բոյախչոնց յերգասաց Համոյին, իբրև «բունտի» ղեկավարի, վճռեց հինգ տարով «սպաշխարել» Ռուսաստանի Նարկով քաղաքի կենտրոնական բանտում:

ՆՐԱՆՑ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Մերվը առաջ ել յերեք ուրախ կյանք չուներ. իսկ դատից յեվ գյուղացիների բանտարկութիւնից հետո նա նման եր, հեքյաթներում պատահող, կախարդված տեղի, վորի բնակիչները տարին բոլոր աշխատում, քրտինք եյին թափում, բայց ապրում եյին իբրև սովերներ. կարծես՝ մի աներևույթ ձեռք փակ եր դրել նրանց շրթունքներին, վոր չխոսեն, չերգեն ու չծիծաղեն, նույնիսկ չհուզվեն:

Մերվեցիների գլխին, ասես, հող եր մաղված, նրանք մի տեսակ շմած, քշված եյին. նրանց սիրտը լուռ մխում, լալիս եր, առանց արցունքի, առանց հառաչանքի:

Յեզոր աղա Թարխանովին մերվեցիները առաջ ել չեյին սիրում, բայց այժմ ամբողջ հոգով առում եյին նրան և ամեն կերպ աշխատում եյին չպատահել այն մարդուն, վորը սև քող եր քաշել նրանց սրտերին ու պարծենում եր իր արարքով, իր զոռ ու զառքով:

Թարխանովը շատ լավ զգում ու հասկանում եր գյուղացիների այդ վերաբերմունքը, բայց վոչինչ չեր անում, վոր նրանց սիրտը շահի, ընդհակառակը, որ ավուր նա դառնում եր ավելի պահանջլոտ, ավելի խիստ ու ժանդ: Նրա խելքով այդպես պեսք եր վարվել գյուղացիների հետ, վորպեսզի նրանք չմտածեն, թե աղան նրանց բանի տեղ ե գնում, կամ ել, վոր ամենագլխավորն ե, նրանցից վախում եր:

Այդպես բոլորեց, անցավ հինգ տարի: Հինգ անգամ գարունը մախմուռ կանաչով և ալ ու ալման ծաղիկներով զուգեց աղքատիկ Մերվի սար ու քարը: Հինգ անգամ գարնան հեղեղների հետ պղտորվեց և ապա զուլավեց Սիմայի ջրվեժի խոտուն ջուրը: Հինգ անգամ հեռու հարավից յեկավ ծանոթ ծիծեռնակը ու քամբախտ Համոյի խրճիթի կտուրի տակ շինած իր բնում ձագեր հանեց և ելի թռավ դեպի տաք յերկրներ, բայց Համոն չկար ու չկար:

Այդ ժամանակամիջոցում պրիստավ Մնդրիասովը, իր հավատարիմ ու յեռանդուն ծառայության համար, պաշտոնով մեծացավ և վորպես գավառապետ փոխադրվեց ուրիշ գավառ, հետը տանելով մերվեցիների նզովքի հետ նաև իր հռչակավոր զոդալը: Նրա տեղ յեկավ թյուրք կալվածատեր Իբրահիմ բեյ Նաջաֆովը. սա Համազանց մոտիկացավ Թարխանովի հետ, վորին ուրիշ կերպ չէր կանչում, քան «մեծ յեղբայր Յեգոր աղա»:

Ակցիզ Նովիկովը, իր վեց աղջիկներին մարդու տալու հուսով, փոխադրվեց ուսուստանական սահմանադրւի ավաններից մեկը, վորտեղ բավական զորամասեր եյին նստում և հարսնացուների մեծ ընտրություն կար օֆիցերների շրջանում:

Ծերունի քննիչը շարունակում էր առաջվա պես խմել և ճաշերից հետո մի յերկու ժամ քնել, իսկ արեամտին նստած իր տան դիմացը, նայել այն հարս ու աղջիկներին, վոր սափորն ուսած, դնում եյին ջրի:

Բանտից ազատվել, դուռը եյին վերադարձել Մերվի բոլոր դատապարտվածները, և առաջվա պես, զբաղված եյին իրենց դարդ ու հոգսով, բացի մեկից, վորը մեռավ բանտում:

Վերադարձել էր նաև Մուրադ բիճան, բայց նա այլևս աշխատել չէր կարողանում, վորովհետև բանտում նա վոսկրացավ եր ստացել և վոտ ու ձեռն ուռած, ընկել եր անկողին: Ծերունու աղքեղն ամեն անգամ լցվում եյին արցունքով, յերբ նայում եր մանուկ Գուրգենին, վորն այժմ անտեր վորք եր և մեծանում եր նրա հարկի տակ:

— Պառնվ, եղ յերեսուն լավ մտիկ տուր, մեղք ե, յեթիմի սիրտը բարակ և լինում,— ասում եր նա միշտ կնոջը. խորը ախ քաշելով:

— Գն, սրտի տեղ քնր եմ ման ածում դոշխ մեջ, վոր դրան վատ նայեմ,— հանդիմանությամբ պատասխանում եր Շողեր բաջին և ավելացնում. Յես իմ յերեսոց— իմ թոռների բերնից կարում, նրա բերանն եմ դնում, նրան ուտացնում, համա խեղճ յեթիմի յերեսին ծիծաղ չի գալի ու չի գալի:

— Տեսես, եղ քաֆուր մարդուն ի՞նչ պատահեց, վոր մինչև որս իղ ու թողը չկա. հրեն աստվածածնին չորս ամիս կլինի, ինչ նրա վախտը թամամվել ե, ամա... Հո մի քամբախտություն չի յեկել խեղճի գլխին:

— Աստու լանը չվ ե իմանում, հալթաթ փորձանքի յե ընկել բերադղը: Գն մարդ, մոռացա քեղ պատմեմ, թե յերեկ դիշեր ի՞նչ հրաշք երազ տեսա:

— Երազդ բարին կատարի, ի՞նչ տեսար:

— Երազիդ տեսա՝ վարդավառ եր. սող գեղականը հավաքվել եր աղենց մեծ բախշեն, վորտեղ ամեն ծառ ու ճյուղ, թուփ ու տունիկ կարմիր ծաղիկներ եյին հագել, կասենաս նոր գարուն եր, ամառ չէր: Յեգոր աղին նստած իր սիպտակ ձին, ուզում եր առվից թռչել են կողմը, ամա ձին սխալտակ ձին, ուզում եր խռ-խռո եր լինում, ականջները խլլկոտում ու յետ-յետ եր քաշվում: Մեկ ել, վորտիանց վորտի, ուրախ յերգ ասելով,

յերևաց Համոն, ուսերի վրա կանգնեցրած Գուրգենին, վոր ձեռքին բռնած ուներ մի վառ ջահ: Գեղականը Համոյին ենպես ընդունեց, ասես նա հեշ բանտարկված չեր ելի: Մեկ ել նայեմ, Համոն չքվեց, Համոն չկա: Նրա տեղ մի բարձր անկվ ե, վորի վրա Գուրգենը կանգնել, խոսում ե, համա ձենը չի լսվում, խոսքերի տեղ նրա բերնից ոձեր են թափվում—յես ասեմ՝ հազար, դու ասա—տասը հազար ոձ: Գեղականը ոձերից չի վախում և հանգիստ թողնում ե, վոր նրանք գան, փաթաթվեն իրեն: Ոձերի աչքերի տեղ վառվում են կապույտ բոցեր, վորից մեծ քամի չի բարձրանում և Յեգոր աղին ձիուց ցած քցում: Ձին ծառս ե լինում յետի վտոների վրա, առաջի վտոներով, ասես, ուզում ե խփել աղի գլխին, ամա չի կարողանում և եղպես մնում ե ողի մեջ: Աղեն չոքած գետնին, սարսափից շունչը պահած, սուս նայում ե ոձերի կապույտ-բոց աչքերին և կամաց-կամաց սեանում, դառնում և երված սև կոճղ: Գեղականը ծափ ե տալիս, քահ-քահ ծիծաղում ե: Մեկ ել ատենեմ, թիթեռնակի նախշուն թևներով, ներս վաղեց խումար Նազոն: Աղենց բախչեն ել չկար, մեր բակումս ելինք: Նա ձեռքս բռնեց, պաչեց և ասաց.

— Շողեր բաջի, Գուրգենիս լավ պահիր, վոր յերեստող արեը սլայծառ ըլի:

Ասեց, լաց ելավ և ելի ձեռքս բռնեց ու պինդ հուպ տվեց, ենպես պինդ, վոր յես ցավից վեր թռա, զարթեցի:

— Կնիկ, եղ ի՞նչ գուլում, եղ ի՞նչ գլխակեր վատ երաղ ե. տես, բերնիդ փակ դիր, ոչ ովի չպատմես, կարող ե հասնել աղի ականջին, ու են վախա բաներս պրծած ե...

Այս խոսակցությունից անցել եր ուղիղ ինն որ: Գիշեր եր: Կրտալուսինը մեջքը դեմ արավ Գյուլիջա սարին, մի վերջին անգամ նայեց խոր քնի մեջ մրավող Մերվին, հետո աննկատելի սողաց դարի են կողմը, և սար ու ձոր պրկախառնվեցին խավարի մեջ:

Հենց այդ ժամին մի մարդ Սիմայի ջրվեժի մոտով լիջնում եր դեպի գյուղը: Ինչպես յերևում եր, նա շատ հոգնած եր, վորովհետև դժվարությամբ եր շաքժում վտոները: Գրտինքը ճակատից թափվում եր յերկար միրուքին, վորի մեջ սխալալ մաղերն սկսել ելին դու անել սենքին:

Ջնայելով իր հոգնածությանը, անծանոթն շտապում եր բոպե առաջ հասնել այն խրճիթին, վոր միայնակ կանգնած եր գյուղի հարավային կողմում, ձորի ավին: Նա շտտ զարմացավ, վոր բակի մի փեղկանի գուռը չկար. բայց ուշադրություն չդարձրեց զրա վրա ու շունչը պահած, սիրտը թփրտալեն, մոտեցավ տան ցածիկ դռանը և զգուշությամբ հրեց այն, վոր բացի: Դուռը փակ եր: Նա սկսեց ծեծել և ականջ դնել, վո՛չ մի պատասխան, վո՛չ մի շշուկ ներսից: Անծանոթի մարմնով անցավ մի ակամա դարզանդ. ժպտի պես մի բան ծռվեց նրա մաշուկ դեմքը, նա շշնջաց.

— Ի՞նչ բան ե դա... Եղպես ել պինդ քնել...

Նա սկսեց ավելի ամուր ծեծել դուռը և դալված ձայնով կանչել.

— Նազո՛, Նազո՛:

Պատասխան չկար: Սարսուռը տիրեց նրան. նա լսում եր իր սրտի զարկի ձայնը և զգում, վոր վտոները դողում են, ասես, չեն դիմանում մարմնի ծանրությանը: Նա ույժ արավ և գնաց դեպի գոմը, վորի դուռը ճխանի վրա բաց

եր. պարզ եր, վոր ախտեղ վոչինչ չկար: Նա ձեռքը տա-
րով դեպի հալերի թառը, բայց այստեղ ել դատարկու-
թյուն եր: Մի տխուր կասկած նշտարի պես խոցեց նրա
ուղեղը... Նա դուրս փախալ այդտեղից, ինչպես մոռելնե-
րից վախեցողը փախչում ե գերեզմանատնից, և գնաց
գետի գեղամեջը, վորտեղ գտնվում եր Մուրադ բիձայի
տունը:

Ո՞վ ե,— հարցրեց Մուրադ բիձայի մեծ թոռը՝ պա-
տանի Սուրենը, վոր քնել եր բազում դրած խոտի խուր-
ձերի վրա և առաջինը լսեց դռան թակոցը:

— Յես եմ, բաց:

— Ո՞վ ես դու:

— Բոյախչոնց Համոն, բաց:

Սուրենը դուռը բացեց և գնդակի պես սլացավ տուն:

Մի րոպեյում Մուրադ բիձայի բազմանդամ ընտա-
նիքը, բացի վորքերիկներից, շարվեց Համոյի շուրջը, սրա-
հում և ձեթի ճրագի տղոտ լույսով նայում, տնտղում եր
այն մարդուն, վորի վերագարձը հրաշք եր թվում: Այդ
տեսակ հանդիպումի հետ կապված ուրախ բացականչություն-
ներից, լացից և հարց ու փորձից հետո Համոն կմկմալով
հարցրեց.

— Շողեր բաջի, ամոթ չլինի ասելը, վորտեղ ե մեր
կինը, վորտեղ են աղջիկս ու տղաս. մեր տունը խարաբա
յե, ենտեղ յես կատու յել չգտա:

Այդ հարցը սև ամպի նման մութ ստվեր քցեց ամենքի
դեմքին. րոպեական ծանր լուսթյունից հետո Շողեր բաջին
ասաց.

— Հրեն Գուրդենը Արսենիս հետ քնել են թախտին,
այ, ենտեղ, տես:

Համոն մոտեցավ և կարոտով, անուշ ծառավով համ-
բուրեց վորդուն, վորը մերկ թևը հանեց կտավի վերմակի
տակից, շուռ յեկավ մեջքին ու շարունակեց քաղցր
մշմշալ:

— Բա Մարոն ո՞ւր ե:

— Մարոն քո ցավը տարավ, իր ջահել կյանքը քեզ
մատաղ արավ:

— Յէրբ, վո՞նց:

— Են դուռում որը, յերբ ասածու կրակ պրխտավը
քեզ քցել տվեց գետին ու սկսեց զողալով ծեծել, խեղճ
թֆիլ աղջիկը վախեցավ, ցավն ընկավ ջանը, բարակեց,
դեղնեց, դարձավ աշնան խաղալ և ձեր բռնվելու յերկրորդ
տարվա կանաչ կիրակվա որը իր արդար հոգին փչեց:

— Մարոս երվել ե Յեգոր աղի վառած կրակից, իսկ
Նազոն ել հալված կլինի դարդի և անտերության մրմու-
ռից...— կարծես ինքն իրեն, հառաչեց Համոն, աչքերը
լիքը:

— Հա, վորդի, դրա նման մի բան: Մեր բռնվածները
հլա յետ չեյին եկել, վոր Հեղուշ խանումը յերկու հոգիս՝
յելավ ու դնաց քաղաք, հորանց տուն՝ ենտեղ ազատվելու:
Մի որ, արևամուտից հետո, Յեգոր աղեն մարդ ե դրկում և
Նազոյին վաղ կանչում և իր մոտ Ջուր դարձածը եկավ
մեր տուն, թե Շողեր բաջի, ըսենց ու ըսենց, ի՞նչ կասես—
եթամ, թե չեթամ: Յեսել, վայ ինձ, մեղքս ինչ թագցնեմ, ասի.

— Ա՛ղջի, ընչից ես վախում, աղեն հո չի՞ ուտի քեզ,
դնա տես, ի՞նչ ե ասում. հալրաթ սիրտը ունի ե ընկել
ուղում ե եզ անտեր բալիկիդ մի լավություն անի: Խեղճը
չեր ուղում գնա, համա յես համոզեցի, զրկեցի: Գնաց...
Վո՛չ բարով գնար: Առավոտը մեկ ել խաբարն եկավ, վոր
Խումար Նազոն իրեն Սիմայի ջրվեժից քցել, ջարդվել ե...

Ասել կուզի, Նազոն Յեզոր աղի ձեռքով անպատիվ լինելուց հետո, նամուսից խեղդված, գնացել, իրեն քարափից ցած և նետել, չէ, Շողեր բաջի,—հարցրեց Համոն, սիրտը փոթորկի ծով:

— Վհ, վորդի տունը մերը, խոսքը մերը, յեղելու թյունն եսպես և. աղեն ուզեցել և եդ լիբ բանն անի, համա մարալ Նազոն նրա ձեռքից փախել և մթության մեջ ջալկոնից ընկել, ջարդ ու փշուր և յեղել: Աղեն նրա դիակը տանել, քցել և ափել Սիմայի ջրվեժի տակ, վոր ինչ և ասեն, թե Նազոն ինքն և սպանել իր գլուխը:

Մի քար լուսթյուն ծանրացավ ամենքի շրթունքներին. ապա լավեց Համոյի կրծքից դուր փրծած դառն հառաչանքը, վորից հետո խոսեց Մուրադ բիձան.

— Բան չկա, Համո ջան, ապրի գլուխդ, ապրի եդ սիրուն բալեդ: Փնոք իրեն, վոր սաղ-սալամաթ եկար, հասար քո տուն ու տեղին, քո գավալին. ինչ անենք, աշխարհ և, եդ ել և պատահում... Վոր ճար չունենք, պիտի համբերենք, ելի:

— Ոջախ քանդված, բալես սպանված, կինս նահատակված, ընտանիքիս պատիվն անարգված, վեց տարի բանտերում կյանքս մաշված, ելի՞ համբերեմ, ելի՞ դիմանամ... Ելի՞ արուն-քրտինք թափեմ, աշխատեմ, վոր Յեզոր աղեն վայելի, հա... Չե, Մուրադ բիձա, սաղ աշխարհը կթքի իմ տղամարդությանը, իմ լեշին: Որես յետը յես ու Յեզոր աղա Թարխանովը միևնույն արևի լույսով ապրել չենք կարող, մեզանից մեկն ալելորդ և ես փուշ աշխարհում...

Մյուս առավոտ ամբողջ Մերվը իրար դիպով, իմանալով Համոյի վերադարձի մասին: Կին ու տղամարդ, աղջիկ ու տղա, ամենքն իրար տեսնելիս, «բարի լուսի» փոխարեն, զարմանքով հայտնում էին միմյանց այդ նորությունը և

շտապում էին Մուրադ բիձայի տունը՝ տեսնելու այն մարդուն, վորը դարձել եր գյուղի սիրելին, գավաթի «հայտնի» տղամարդը:

Ասես, արես ել ուրախությունից փայլում եր ափելի պայծառ. նա իր անուշ լույսով վողողել եր սար ու քար, ծառ ու տունի:

Շողեր բաջին մի հավ եր մորթել և ձավարի քաշովու պատրաստություն եր տեսնում սրահի թոնրի մոտ, յերբ Մինասը յեկավ ու Յեզոր աղի անունից կանչեց Համոյին:

Այդ անունը լսելիս՝ Համոյի նիհար, դուռնառ դեմքը բոցավառվեց, և նա կծու ժպիտով ասաց.

— Աղես կանչում ե, գնանք, տեսնենք ինչ և հրամայում:

Այդտեղ հավաքված ամբողջ գեղականը, բացի կանանցից, Համոյին մեջ արած, շարժվեց դեպի Յեզոր աղայի պալատը, վորը նա շինել եր իր անդրանիկ գավակ Բուրթելի համար:

Համոյի ձեռքից բռնած, թրվուսին գնում եր նաև փոքրիկ Գուրդենը: Նա յերջանիկ եր, վորովհետև նրա մանկական հոգին զգում եր, վոր այդ մարդն աշխարհում ամենեց մոտիկ և իր սրտին և վոր նա ամենքից ափելի յսիրում նրան: Լուսաբացի արտույտի նման, Գուրդենը ճըլվըլում, զանազան բաներ եր ասում հորը, բայց հոր մտքերն ուրիշ տեղ էին, նա չեղ լսում վորդու ասածները և մեջենայաբար պատասխանում եր.

— Հա, բալիկս, հա...

Յեզոր աղան ձեռները դրած շալվարի զրպանում, նայում եր, թե ինչպես խառատ Նիկոն իր աշակերտի հետ գծում, մոխրաշրում թրշած թելով զուգահեռ խաղեր եր քաշում հաստ գերանի վրա: Մյուս գերանի մեջ բլթով իրած

եր մի լայնաբերան կացին, կալվածատերը աջ ձեռքը դըր-
պանից հանեց, կռացավ և բռնեց մատն ու ցուցամասը բա-
ցած, սկսեց չափել յերկու գծերի մեջ յեղած տարածու-
թյունը: Յերբ նա վերջացրեց չափը և նորից ուղղվեց իր
տեղում, մոտեցան Համոն ու գեղականը:

— Վահ, պարոն Համո, համա պինդ յերես ես ունե-
ցել, հա. եղբան տարի բերդումը մնացիր, չփտեցիր և սաղ-
սալամաթ յնտ յեկար:

— Յես եկա, բահ, Յեգոր աղա, յնտ եկա:

— Բեհեամբ արիր, վոր յետ եկար, լիրը, ալազակ,—
բղավեց Թաթխանովը, կատաղությունից խռպոտ ձայնով:

Փոքրիկ Գուրգենը հասկացավ, վոր այդ յերկար բե-
խավոր մարդը չի սիրում իր հորը, ինչպես սիրում եյին
նրան գեղականը, այդ պատճառով նրա զվարթ գեմքը բո-
պեապես փոխվեց, տխրեց: Նա ամուռ կպավ հորը և քաշեց
նրա թևից, կարծես, ուզում եր ասել, թե գնանք, հե-
ռանանք այդ չար մարդուց: Բայց այդպես չէր մտածում
նրա հայրը, ուստի, վնչ պակաս կատաղությամբ նտ պա-
տասխանեց իրեն վերավորողին.

— Յես վոր ավազակ լինեյի, քեզ պես «աղա» կծնվեյի,
լիրը մարդասպան. յնտ տուր ինձ աղջիկս, յնտ տուր ինձ
յերեխուս մորը:

— Յերեխուդ հերն ել անիծած, քո հերն ել հետը, շուն
շան վորդի, կինդ ինձ պահ եյիր տվել, վոր հիմա պահանջում
ես... Ձենդ կտրիր և հենց հսոր և յեթ կորիր, հեռացիր Մեր-
վից. յես չեմ ուզում, վոր դու ապրես իմ հայրենական գյու-
ղում, իմ սեփական հող ու ջրում: Գլուխդ քարին տուր, աչ-
քիցս ռադ յեղիր, վոր ել քո ձենը, քո հաջոցը չլսեմ, փեղա-
վանդ մունդոսիկ:

— Ասել կուզի, դու ուզում ես ինձ իմ պապնական ո-
ջախից վոնդել, ինձ դադարեցուն անել, քցել դոնե-դուռ, վոր
իմ տեսքից քո աղիդ արյունը չպղտորվի, քո քաղցր քունը
չխանգարվի, հա:

— Հա, սոված շան վորդի, հա. չեմ ուզում ոճն իր
ճուտի հետ տաքացնել ծոցիս մեջ... Ձեմ ուզում իմ գյուղի
մեջ տեսնել քո կեղտոտ ուխը, բողի դավակ,—բղավեց Յե-
գոր աղան, թքեց Համոյի կողմը և վրա պրծավ, վոր խփի
նրան:

— Իմ մորը բող ասողը դեռ չի ծնվել, բողերի բող-
Յեգոր աղա,—մռնչաց Համոն, կայծակի արագությամբ հա-
նեց գերանի միջից կացինը և մի հարվածով կաղամբի պես
կես արավ Թաթխանովի գլուխը:

Կալվածատերն անկենդան փովեց գետնին՝ իր լճացած
արյան մեջ:

Կատարված սպանության սարսափից Մերվը անաբեկ-
վեց, քարացավ: Գյուղացիք իրենց սրտի խորքում ուրախ
եյին, վոր շանսատակ յեղավ Յեգոր աղան, բայց վախում
եյին այդ մասին բարձր խոսել, կարծես դրանով կմատ-
նեյին իրենց, թե իրենք ել մեղսակից են յեղած հանցան-
քին: Նրանցից շատերը, կասկածից հեռու լինելու միամտու-
թյամբ, գնացին դաշտ աշխատելու: Վոմանք փակվեցին ի-
րենց խճիթներում և մութ ու մռայլ լուել եյին, վնչ ու-
ղում եյին խոսել, վնչ ել ուրիշի խոսածը լսել: Իսկ ավելի
համարձակների մի խումբ, հավաքված նալբանդ Հակոբի
դուքնի առաջ, խոսում, դատում, իրենց ապրած զգացում-
ներն եյին արտահայտում:

— Աղեն ստացավ իր արդար պատիժը, ափսոս Համո-
յին, վոր ելի պաի ընկնի եդ դալում ռսի դալամի տակ...

— Մոռո բան ե, աստծու դատաստանը ես կյանքում ե. ինչ ցանես, են ել կքաղես...

— Համոն արավ են, ինչ վոր պտի աներ մեզնից ամեն մեկը...

— Եդ բանը պիտի ըլեր, եդ նրա ճակատագիրն եր...

— Յեգոր աղին պտի կայծակը խփեր սարի գլխին, յա ոձը կծեր դաշտի միջին, վոր լազաթ տար, թե չե՝ ելի պտի հեղեղը շուռ տան գեղի վրա, տներս քանդեն...

— Ձուրն ընկածը անձրեից չի վախի: Յերնեկ ամենքիս թոփ անեն, տանեն Սիմայի քարից թափեն, վոր մի անգամից կոտորվենք, ջաններս ել հանգստանա, հոգիներս ել:

— Դրոստ վոր, քանի՞ կուպեկ արժի մեր ապրուստը. տարին բոլոր մեր քրտինքով մենք ջրում ենք հողը, թաց ենք անում մեր սար ու քարը, համա մի վոր կուշտ հաց ել չենք ուտում: Մեր վաստակի հնդից մեկը վերցնում ե աղեն, չհաշված թագաւորական հարկն ու չոփբաշին, կոռն ու բեզարը, չհաշված ռեսին ու գլավին, սուգին ու ակցիդին, պրիստավին ու նաչալնիկին տվածը: Դրանք հո, կեր-ցավի պես, նստել են մեր ջանին, ուտում են, ուտում, ասես հեչ ինսան չենք մենք:

— Ել ասում ես: Բա վոր աղեն հրամայում ե քեզ՝ ջրել իր արտը, յերբ քոնը չորանում ե, քախանել իր բանջարանոցը, յերբ քոնն ալաղի մեջ խեղդվում ե, քաղել իր արտը, յերբ քոնը կծողում ե... Յեւ կարող ես չգնալ, նավթ կածի վրադ, սաղ-սաղ կվառի...

— Տո ջան, եդ վոր եղպես չլեր, Համոն խո զիժ խոտ չե՞ր կերել, վոր որը-ցերեկով խփեր, Յեգոր աղին սպաներ:

— Համոյի տունը քանդվի, ինչպես քանդվեց. նրա հալում մարդ պտի յա հրեշտակ ըլեր, յա աղոթած եշ, վոր Թարխանովի դուխը չփչեր:

— Մախլոս. Յագոր աղեն գնաց, ել յետ չի գա, նրա տեղը կրոնի Բուրթել աղեն... Իսկ ասած ե. «շունը շնից, յերկուսն ել մի տնից»: Մուխը միշտ ել դուրս կտա մեր քթից... Տեսներք, թե վաղվա քաֆր որն ինչ ե բերելու մեզ...

«Վաղվա քաֆր որը» յերկար սպասել չտվեց իրեն. նա յեկավ ե եկզեկուցիայի զուլումով լցրեց մերվեցիների սիրտը: Նրանց խելքի բերելու համար կառավարութունն ամեն մի տան մեջ դրեց մի կողակ իր ձիով, վորոնց պիտի կերակրեյին ե խնամեյին մերվեցիք:

Սարսափելի յե եկզեկուցիայի կողակը. նա յերկու մարդու չափ ուտում, յերկու մարդու չափ փչացնում ե: Նա իր ապրած տան հարս ու աղջկան նայում ե իրբե իր սեփականության վրա, ե վաճ նրան, ով կհակառակի նրա լիրբ ցանկություններին... Պարզ ե ուրեմն, թե ինչ դժոխք եր դարձել Մերվը: Խեղճ գյուղացիք ձենները գցած փորը՝ լուռ կատարում եյին այն ամենը, ինչ պահանջում եյին նրանցից. իսկ պահանջներին վերջ ու թիվ չկար...

Թիվ չկար նաեւ Համոյի տանջանքներին բանտի մեջ, վորտեղ փակված, նա սպասում եր իր դատին: Նրա ուշ ու միտքը գյուղումն եր, վորի գլխին նրա պատճառով նոր փոթորիկ պայթեց, կարկուտ շաղվեց, ծեծիկց գյուղակաւնին, արցունք քամելով ամենքի աչքերից:

Համոն մտածում եր յեղածի մասին, մտածում եր վերջին վեց տարին բանտերում քաշած իր տառապանքների մասին, մտածում եր իր վոչնչացած ընտանիքի մասին. նա մտածում եր, թե ինչպես ինքը սիրում եր աշխատել, սիրում եր յերգել ե ծանր աշխատանքը յերգով թեթեացնել,

սիրում եր՝ իր հարևաններին ձեռքից յեկած լավությունն անել, իսկ այսօր ինքը մարդասպան ե դառել:

Ինչո՞ւ, ի՞նչպես, շինականի այդ քրտնաշխատ կյանքից նա յեկավ, հասավ մինչև մարդասպանություն:

Մտածում եր Համոն, և ամբողջը նրան թվում եր վորպես սարսափելի յերազ: Բայց յերազ չեր դա, յերազը տարիներ չի տևում, յերազի մեջ պայծառ բռնակներ կան, վոր ամբողջ կյանք արժեն... Յերազ չեն վնչ բանտի այս մռայլ խուցը, վնչ ժամապահ զինվորը, վնչ ել յերկտասարդ ուում բանտապետը, վոր այսօր առավոտյան հայտնեց Համոյին, թե յերեք ուրից հետո նշանակված ե նրա դատը:

Դատ: Յերեք ուրից հետո դիտուն, ուսումնական մարդիկ պիտի հավաքվեն և իրենց դրած որինքներով պետք ե դատեն, դատապարտեն Համոյին, վորպես չարագործի, վորպես մարդասպանի:

— Իսկպես, չարագործ, մարդասպան եմ յես,— մտածում եր Համոն և սարսափում այդ մտքից: Մի՞թե չարագործ ե նա, ով քախան անելիս՝ դալար, բայց ֆնասակար խոտերը կտրում, դեն ե ձգում... Մի՞թե չարագործ ե նա, ով վոչնչացնում ե իր ցորենի արաը կտրող մկներին... Մի՞թե չարագործ ե նա, ով սպանում ե իր արյունը ծծող լուռ կամ վոջիլը... Մի՞թե մարդասպան եմ յես, վոր սպանեցի Յագոր աղին, նա մարդ չեր, նա գաղան եր՝ առանց գութի, առանց խղճի: Յեգոր աղեն մարդ չեր, նա տղրուկ եր, վոր ազահաբար ծծում եր աշխատանքի մարդկանց արյունը, մինչև վերջին կաթիլը: Յեգոր աղեն մի մեծ մարդասպան եր, վորի ձեռքերը ներկված եյին իմ կնոջ և յերեխայի արյունով: Սպանելով Յեգոր աղին, յես վրեժ առա, իսկ վրեժը արդար զգացում ե, վորից հրաժարվողն արժանի չե նզովքի, արժանի յե թուք ու մուրի...

Յերկու ամիս շարունակ այս մտքերը խել եյին Համոյի հանգիստը, կտրել եյին նրա աչքերի քունը: Իր հոգու խորքում այժմ նա պատասխան տվեց դրանց, ուստի, առաջին անգամ, թեթևացած սրտով նա փակեց իր ուռած կուպերը և խորը քուն մտավ: Համոն հիմա գիտե իր ասելիքը դատավորներին, այդ պատճառով՝ նա անվրդով սպասում եր դատին:

Յեկավ վերջապես այդ որը. նահանգական դատարանի սրահը, միջանցքները լի եյին հետաքրքիր ծով բազմությամբ: Համոն միանգամայն հանդիստ եր և սիրահոժար պատասխանում եր իրեն տված բոլոր հարցերին, համոզված, թե իր ասածները հալալ յուղի տեղ են ընդունում դատավորներն ու նրանք ամենքն ել՝ Համոյի տեղ նույն բանը կանեյին, նույն կերպ կվարվեյին: Այդ համոզումը Համոյի մեջ զորեղանում եր մերվեցիների տված վկայությամբ, վորտեղ Համոն յերևում եր վորպես հոգի-մարդ, իսկ Յեգոր աղան՝ վորպես անսիրտ չարագործ:

Այդ եր պատճառը, վոր յերը նախագահը Համոյին հարցրեց, թե նրա վերջին խոսքն ի՞նչ ե, նա ասաց.

— Պարոն դատավորներ, յես մարդ չեմ սպանել, յես սպանել եմ մի կատաղած շուն, վորին դուք ել կսպանեյիք... Ել բան չսնեմ ասելու, անցածը դուք գիտեք:

Իսկ «պարոն դատավորները» գիտեյին, վոր Յեգոր աղա թարխանովը մարդ եր և կալվածատեր, վոր նրան սպանել, նշանակում եր սպանել տիրող կարգերը, նշանակում եր դեմ գնալ տիրող իշխանության, տիրող որենքներին, ուստի, վորպեսզի այդ բանը ուրիշների համար վատ որինակ չդառնա, պետք ե Բոյախչոնց Համոյին սպանել, պետք ե նրան կախել հրապարակով: Այս վերջին հանգամանքը շատ կարևոր եր. Համոյի մահապատիժը տեսնողները կհամոզ-

վեյին, վոր ցարական կառավարութիւնը «հանաքներ» չի սիրում և կախաղանի վրա խեղդում ե ըմբոստութեան, բողոքի ու աղաւտութեան ամեն տեսակ ճիչ և ձգտում:

Աշնան արեւը, քողը դեռ ձգած վառվռուն նորահարսի պէս, յերեսը բաց ու պայծառ, նայում եր Յերեմի Մըլեր ավազոտ դաշտին, կարծես՝ զարմացած, թե ինչո՞ւ համար են այդքան մարդիկ հավաքվել այնտեղ:

Բազմութեան մեջտեղում՝ զինվորների ողակով շրջապատված բլուրի վրա, ամրացած եր փայտե կախաղանը, կախաղանի մօտ խմբվել էին նահանգական դատարանի նախագահը, քարտուղարը, վոստիկանապետը և նահանգի կենտրոնական վարչութեան ամբողջ կազմը, նահանգապետի գլխավորութեամբ: Նրանք ամենքը հագել էին տոնական զգեստ, փայլուն կոճակներով, վոսկեզոծ ուսադիրներով և սպիտակ ձեռնոցներով, ասես՝ արքայական զորահանգեսի յեկած լինեյին:

Ամբոխն իրար բռնելով, հրելով ուզում եր մոտենալ պաշտոնյաների այդ շքեղ խմբին, բայց չէր կարողանում անցնել զինվորների կռու շղթայից և, ժայռին զարնված ալիքի նման, թափը կտրված, ելի հետ քաշվում, բռնում եր իր նախկին տեղը:

Հանկարծ բազմութեան մեջ ընկավ մի անհանգիստ իրարանցում, վորից հետո լսվեց՝ «բերում են» շշուկը, և ամենքը բարձրացած վոտի մատների ծայրին, հայացքները դարձրին դեպի բանտը:

Այնտեղ յերևաց սուսերամբերկ ձիավոր կողակների մի վաշտ, վոր զանգաղ մոտենում եր կախաղանին: Կողակների շրջանի մեջ, զինվորական սայլակառքի վրա նստել եր Համոն, թեւերը կապած մեջքին, գլուխը քաշ կրծքին: Ամբոխը

ծուլ յեկավ դեպի նա, բայց կողակների սրերը շողալեն բարձրացան ողի մեջ, և հազարավոր մարդկանց բազմութիւնը կախարդվածի պէս քարացավ, մնաց տեղումն անշարժ:

Համոյի վզից կախած եր մի սև տախտակ, վորի վրա խոշոր տառերով գրված եր «Մ Ա Ր Դ Ա Ս Պ Ա Ն»:

Յերբ սայլակառքը կանգնեց, վոստիկանապետը հրամայեց արձակել Համոյի թեւերը և ցած իջեցնել նրան:

— Վա՛, դա հասակով մարդ ա ելի, իսկ յես կարծում եյի, թե ջահել ա,— ասաց մեկը:

— Լրագրում գրած եր, վոր յերեսունչորս տարեկան ա. յերեսում ա՝ «լավ» որեր շատ ա քաշել, վոր եղպես սխալակել ա,— պատասխանեց մյուսը:

— Աչքերը գցել գետնին, ոչ ովի չի նայում,— խոսեց յերրորդը:

— Խիղճը շատ մաքուր ա, ենդուր,— բացատրեց չորրորդը:

— Խղճի մասին դու վոր չխոսես, ավելի լավ կլինի,— թշուառ մի արհեստավոր և հայացքը դարձրեց քահանային, վորը խաչն ու ավետարանը ձեռքին՝ մոտեցավ Համոյին:

Լարված հետաքրքրութիւնն ամենքի ուշ ու միտքը կենտրոնացրեց այդ կողմը:

— Վորդի, համբուրի Քրիստոսի ավետարանը և մեղա յեկ,— դողդոջ ձայնով և անվստահ առաջարկեց Համոյին ծերուկ քահանան:

Տերտեր, եսքան խալիսը հավաքվել ե հստեղ, վոր տեսնի— վոնց են սպանում ինձ: Քեզ համար ել, եղ իշխանավորների համար ել, ավետարանը սուրբ ե. դե ցույց տուր ավետարանում են տեղը, ուր գրված ե, թե կարելի յե սպանել:

— Զղջա մեղքերդ, վերդի, վոր յերկնավոր հայրը վորոմի քեզ:

— «Յերկնավոր հայրը» Քրիստոսի բերանով ասում ե, «Մի սպանիր» և թող նա, յեթե կա, ձեզ վողորմի, տերտեր, վոր նրա խոսքերը շուռ եք տվել, ծուկ եք:

Համոն յերեսը դարձրեց քահանայից և նայեց վոստիկանապետին, կարծես, ուզում էր հարցնել, թե հիմա ինչ պետք և անել: Վոստիկանապետը թարգմանի բերանով հայտնեց նրան, վոր նա կարող ե իր վերջին խոսքն ասել:

Յերը Համոն բերանը բացեց, զինվորներն սկսեցին աղմուկով թմբկահարել, վորպեսզի ժողովուրդը չլսի, յեթե հակապետական կամ իշխանության համար վիրավորական խոսք ասի: Այնուամենայնիվ, մոտիկ կանգնողները լսեցին հետևյալը.

— Յես աշխատանքի մարդ եյի ու սե քրտինքով եյի դատում իմ ընտանիքի ցամաք հացը: Յես իմ կյանքում բաց աչքով մըջուն ել չիմ տրորել, բայց ինձ մարդասպան դարձրին: Անեծք նրան, ով ինձ եղ որին հասցրեց, անեծք բոլոր աղաներին, զոռաներին, անեծք դրանց պաշտպանող քյոխվաներին, պլավաներին, պրիստավներին և դրանից վեր գնացող բոլոր չինովներին, մինչև կհասնի իրեն՝ թաղավորին, անեծք:

Հետո Համոն ձայնն ավելի բարձրացնելով ասաց.

— Թող տրեղ միշտ կանաչ մնա են մարդու, ով կպահի իմ քորփա Գուրգենիս, վորին չթողեց տեսնեմ ես շանվորդի պրոկուրորը:

Ապա նա, նայելով դեպի անորոշ հեռուն, բացականչեց.

— Ա՛յ, մերվեցիներ, բաղձեք, հալալ արեք ինձ...

Համոն լուց, լուցին նաև թմբուկները, վորոնց իբրև արձագանք, հնչեց վոստիկանապետի խրոխտ ձայնը:

— Դահլիճ, մարդասպանին հանձնում եմ քեզ:

Առաջ յեկավ վոստից գլուխ կարմիր հագած դահլիճը և կապի վեղարաձև գլխանոցով խալաթը ձգեց Համոյի վրա, կապելով նրա վրա թիվերը: Հետո նա Համոյին մոտեցրեց կախաղանի տակ դրած տարուբետին և ոգնեց բարձրանալ ու կանգնել նրա վրա: Ձեռքի վարժ շարժումով դահլիճը սապնած պարանի ողը ձգեց նրա վիզը և վեղարաձև գլխանոցը քաշեց յերեսին: Զինվորներն սկսեցին աղմկալի թմբկահարել. ամբոխի մարմնով անցավ մի պաղ սաբսուռ, նա կարծես քարացավ: Դահլիճը քացու հարվածով դեն շարտեց Համոյի տակից տարուբետը և նրա վոտներից ուժգին ձգեց դեպի ներքև: Պարանի ողը ամուր հուպ յեկավ Համոյի վզին, յեվ շունչն սկսեց դժվարությամբ ցածանվել նրա մարմնից, վորը շարունակում էր ծանր ձոճվել ողի մեջ:

Սաբսափահար բաղմությունն սկսեց լուռ ցվրվել: Այնտեղ մնաց միայն մի իշած արհեստավորը, վոր քաշվեց բավական հեռու և պահվեց մի քարի տակ:

Յերը որհնքի պաշտպանությունը վայելող մարդասպանները վերջացրին իրենց զղվելի գործը և Համոյի դիակը ձգեցին առաջուց փորած փոսի մեջ, հողով ծածկեցին ու հեռացան, արհեստավորը մոտեցավ այդ մենակ գերեզմանին, մի ըոպե տխուր նայեց նրան, ապա ասաց.

— Հանգիստ քնիր, անձար նահատակ. յես խառատ կարան կարանյանս յերդվում եմ քեզ, վոր քո փոքրիկ Գուրգենին կգտնեմ, կվերցնեմ ինձ մոտ և կպահեմ նրան իմ հարազատ զավակիս պես: Յես նրան կմեծացնեմ, կդաստիարակեմ աշխատեալ, վոր նա շարունակի քո սկսած գործը...

Դու առանց հասկանալու, առանց քեզ հաշիվ տալու, գյուղում հեղափոխություն ելիր կատարում և ճխլվեցիր, վորովհետև մենակ ելիր։ Նա այդ բանը կանի զիտակցաբար, կանի կազմակերպված ու ծրագրված ձևով, կանի վոչ թե մենակ, այլ իր նման շատ շատերի հետ, և կկատարվի այն, ինչ ասած ե, թե գեղը միանա, գերան կկոտորի...

ԳՅՈՒՂԻ ԳՄՐՆԱՆԱԾՈՒՑԸ

1920 թիվն եր. Բոյախոնց Համոյի մահապատժից անցել եր 22 տարի։ Մերվն ել Հայաստանի հաղարավոր գյուղերի նման, իր մեծ բաժինն ստացավ համաշխարհային պատերազմի զուլումից և դարձավ մի հակայական գերեզմանոց, ուր մեռածներին թաղել չեյին հասցնում կենդանի մնացածները։

Անմշակ արտ ու դաշտերի, չորացած ծառ ու այգիների խռնացած շրջանակի մեջ, Մերվը նման եր՝ կտուրը ծուռ՝ մարզի վրա դրած խոտի հին գեղի, վոր արևից, քամիներից ու անձրևից մաշվել, իր բնական զույնը կորցրել եր և տխրություն եր բերում իրեն նայողի սրտին։

Հնացել, խռնացել եր նաև Յեզոր աղա Թարխանովի ժառանգ Բուրթել աղայի յերկհարկանի տունը, վորտեղ ապրում եր նա իր ընտանիքի և պառաված մոր՝ Հեղուշ խանումի հետ, կուշտ ու ապահով։ Յերիտասարդ աղան վաշելում եր տիրող իշխանության հովանավորությունը և հոր նման՝ տղորուկի պես, ծծում եր իր սեփական գյուղացիների կյանքի հյուսթը, լավիելով նրանց դառն աշխատանքի պտուղը։

Նոյեմբերյան առավոտը կամաց-կամաց բարձրացնում եր Մերվի վրա փռված մշուշե ծածկոցը, վորի տեղ յերկինքը շաղում եր ձյունախառն անձրև։

Գյուղի վորոցներում համարյա մարդ չկար, չհաշվելով այն հատ ու կենտ հարս ու աղջկան, վոր սափորն ուսած, գնում եյին ջրի, իրենց բոկոտն վոտները չփիացնելով լալծուն ցեխի մեջ։

Այդ ժամին, քառասունի չափ զինված գյուղացիներ, հավաքված մի տան մեջ, վորի միակ լուսատու աչքը տանիքի մեջտեղում գտնված յերդեքն եր, ժողով ունեյին։ Նրանք շարվել-խմբվել եյին պապենական քուրսու շուրջը և լուռ ուշադրությամբ լսում եյին կաշվե կուրտիկա հագած յերիտասարդին, ինչպես մանուկները հափշտակությամբ լսում են իրենց հետաքրքիր հեքյաթ պատմող պապիկին։

Յերիտասարդի նիհար, դուռնատ գեմքի վրա, իրար միացած բարակ հոնքերի տակ, վառվում եյին խոշոր սև աչքերը. նա շուտ-շուտ թարթում եր այդ նշածև խոհուն աչքերը, հայացքը չհեռացնելով իր զիմացը նստող Արսենի, մեր վաղվա ծանոթ և այժմ մեռած Մուրադ բիձայի թոռների յերեսից։ Ատլասի պես փափուկ նրա դուրեկան ձայնը, նրա ամեն մի խոսքը տեղ եր բռնում ամենքի սրտում, ուրախությամբ լցնելով նրանց հոգին։

— Այս յերկու տարում յես շատ եմ խոսել ձեզ հետ հեղափոխության մասին, այսոր ահա գալիս ե նա՝ վերջնականապես փշրելու մեր ստրկության շղթաները։ Դաշնակների իշխանությունը հոգեվարքի մեջ ե. նա արյունաքամ ե լինում այն վերքերից, վոր ինքն իր ձեռքով տվել ե իրեն։ Մեռնում ե խմբապետությունը, մեռնում ե այն կառավարությունը, վորի հովանու տակ ամեն տեսակ աղասեր շարունակում են ցեցի պես ուտել գյուղացու, ունչպալի և բանվորի կյանքն ու ապրուստը։

— Դժոխք ե, ևզենց ե, ճշմարիտ վոր եղենց ե,— ձայն տվին միաժամանակ մի քանի հոգի, տարբեր տեղերից։

— Դուք իմ առաջվա զրույցներից գիտեք, վոր մեր փրկությունը Բողոքիկ Ռուսաստանի հետ բարեկամ լինելու մեջ է,— շարունակեց յերիտասարդը։ Այդ հավատով՝ Շիրակի, Լոռու-Փամբակի և Ղաղախի շատ տեղերում գյուղացիք դուրս են քշել դաշնակ իշխանավորներին և հաստատել են խորհուրդների իշխանություն։ Մեր շրջանում ել վեց գյուղ այսոր «հրաժարիմք» են ասելու խմբապետությանը և իրենց բազմը կապելու յեն Հյուսիսի հետ, վորտեղից ոգնության են գալու կարմիր զորքերը։ Մերվը յետ չի մնա իր հարևան գյուղերից։ Մեր աղատության ժամը հնչեց, մեր սրտի գարնանամուտն ե այսոր, նա տանում է մեզ գեպի նոր կյանք։ Արդար ե մեր գործը, նա պետք է հաղթանակի։ Կորչեն Բուրթել աղաները։

— Կորչեն Բուրթել աղաները, կեցցե՛ր մեր արդար գործը, կեցցե՛ր աղատ Մերվը,— բացականչեցին Սուրենն ու Արսենը, նրանց ձայնակցեցին մյուսները և վտառի յելան։

Այն զինվորները, վորոնց կառավարությունը դրել եր Մերվում՝ պաշտպանելու Բուրթել աղայի տունն ու կարոթությունը, անցան հեղափոխական գյուղացիների կողմը և բացին Թարխանովի տան դռները նրանց առաջ։

Բուրթել աղան այդ օրը պիտի գնար գավառի կենտրոնը՝ իմանալու, թե ի՞նչ լուրեր կան Յերևանից, այդ պատճառով նա սովորականից վաղ եր վեր կացել և նստած սեղանատանը, թեյ եր խմում, առաջը դրած մեղրի, թարմ կարագի ու վոչխարի աշնան պանրի լեցուն ավանները։

Զինված գյուղացիների յերևալը սեղանատան մեջ այնքան անսպասելի յեր, վոր բերնի պատառը կուլ տալիս՝ Թարխանովը քիչ ֆնաց՝ խեղդվեց։ Վախից նա գուշնը թռցրեց, բայց իրեն չկորցնելով, աղայաբար հարցրեց.

— Ի՞նչ եք ուզում, ի՞նչ ե նշանակում դա։

— Դա նշանակում է, վոր դու ձերբակալված ես և ել աղա չես,— վճռական պատասխանեց կաշվի կուրակայով յերիտասարդը։

— Եստե՛րվանից քո Թագավորությունը մեռավ, աղա Բուրթել,— կծու ծիծաղով ասաց Արսենը։

— Հեղափոխությունը քո գերեզմանը փորել է քեզ կանչում է, աղա ջան, ել մի ուշանա,— վրա բերեց Սուրենը։

— Տեսե՛ք, մեղր ու կարագ ե ուտում աղեն, յերբ մենք ցամաք հաց ել չունենք,— բղավեց մի ուրիշ գյուղացի և մեղրով ամանը շարտեց դեպի կալվածատերը, բայց վրիպեց, չգիպավ նրան։

— Ընկերներ, թողե՛ք, դրա ժամանակը չէ,— սաստեց ղեկավար յերիտասարդը, ապա շարունակեց, դիմելով Թարխանովին, վորը կուշ յեկած, վախից ու անզոր կատաղությունից՝ դողում եր։

Մերվ գյուղի ռազմա-հեղափոխական Կոմիտեյի անուշից հրամայում եմ քեզ՝ վերցնել քո ընտանիքը, մի դուրդ յեզ, մի սայլ, մի շաքաթվա պաշար և հեռանալ գյուղից հենց այսօր ու վորքան շուտ, այնքան լավ։ Դրանից ալ վելի յեթե մի հուշունք ել վերցնելու լինես, գլխովդ պատասխանատու յես։

Բուրթեական լուրերից հետո նա ասաց Արսենին.

— Մի վերջին անգամ ել ծառայիր «աղայիդ» և ոգնիր նրան՝ իր Թանգազին արդ ու զարդը ամբողջությամբ մեջ տեղ բերելու։

Գլուխը կորցրած կալվածատերը «ծառայիր աղայիդ» խոսքերը հասկացավ իսկական մտքով և ուղում եր մի բան ասել, բայց չկարողացավ, յերիտասարդը խանգարեց նրան.

— Թարխանովները տոհմը նստված է յեղեղ Մերվի համար, յեղ այդ նստվածն այսոր մենք տալիս ենք թիփ ու բորանի բերանը: Այդ զգվելի տոհմը արժանի յե վոչնչացման, բայց մենք մեր հաղթանակի, մեր ազատության տոնը չենք ուզում աղտոտել կեղտոտ արյունով... Ընկերներ, դործի անցեք, ինչպես արդեն ծրագրել ենք. ամեն բան պետք է պարզել, ցուցակագրել:

Յերեք ժամ անց՝ յեղան մի սայլ կալվածատեր Բուրթել Թարխանովի ընտանիքը Մերվից տանում էր դեպի գաւառական կենտրոնը: Գյուղից դուրս գալիս՝ կանայք անիծում և մձիկ եյին անում նրան, իսկ յերեխաները շվիացնում ու ձնթփի եյին նետում նրա կողմը: Փոքրիկներին մոտեցավ սպիտակ միջուկով մի ծերունի, մեր վաղեմի ծանոթ՝ բլուլ փչող Ավոն, վորին գավառում «ուստա» Ավո եյին կանչում և ցույց տալով Թարխանովի վրա, ասաց.

— Տեսեք, անուշ բալեք, Մերվից հեռանում է նրա չար հոգին, մեր ամենքի պատուհաս Թարխանովը. նա գնում է, վոր ել իսկի յետ չգա. նա գնում է միռնելու աղքատության մեջ, վորովհետեւ նա սովոր եր մուֆտախոռության, իսկ մուֆտախոռ մարդկանց ել կերակրող չի լինի: Թողեք նրան, թող գնա, կորչի: Նա իր պատիժն ստացավ, բալիկներ, ձեր արածն ավելորդ է. ընկածին չեն զարկում:

Յերեխաները լուռ նայեցին իրար յերեսի և ցրվեցին: Ուստա Ավոն մտազբաղ քնաց մի բոպե իր տեղում կանգնած, հետո աչքերը քցեց դեպի յերկինք ու ինքն իրեն մրմնջաց.

— Են, ինչ վոր ետոր կատարվեց, ասես թամամ երազ լինի. ախ, երեսիկ եդ երազը վերջ չունենա:

Ուստա Ավոն նայեց, մի անգամ ել տեսավ յեղնավոր սայլը և ուրախության արցունքները խեղդեցին նրան...

— Չե, հախ դատաստանը ես կյանքումս ե, — բարձր ձայնով ասաց նա ու տմայտալիւն գնաց աղնց տան կողմը: Քիչ հետո յեղնավոր սայլը սկսեց սողոսկել Մերվի դիմացի բլրի գառիվայրով վեր: Բլրի գագաթից դեպի արեւմուտք, հեռու հովտի մեջ յերևում եր գավառի կենտրոնը, վորի յերդիկներից ծուխը, հողմահար ժապավենի պես, վորովում, ձգվում եր դեպի վեր, միանում գյուղի վրա կախված թուխպ ամպերին,

Թարխանովը նայեց այդ կողմը, և նրա սիրտը կուչ յեկավ, կարծես զգալով, վոր կենտրոնն ալլես անգոր է նրան ոգնելու, նրան պաշտպանելու:

Հուսաչոր կալվածատերը շուռ յեկավ, կարոտով նայեց հայրենի տանը, և նրա աչքերը թաց ելան լքված, անարգված մարդու արցունքներով: Նա չալիս եր իր անկումը, կորած հանգիստ կյանքն ու կարողությունը: Նա լալիս և ափսոսում եր ինքն իրեն, վորովհետեւ դիտեր, վոր ուրիշ ափսոսող չունի, չի յել ունենա յերեք:

— Այդ ի՞նչ որի հասունք, մայրիկ, — բացականչեց նա, դառնալով մորը: — Տեսա՞ր՝ ի՞նչ ոյին յեկան գլխներին եդ կապ կտրած գյաղա-գյուղաները:


Աշխարհում հատուցում կա, վորդի, մենք ստանում ենք մեր արդար հատուցումը: Թարխանովներ ցեց են յեղեղ Մերվի սմբած մարմնի վրա ու նրանց ցեղը պիտի ջնջվել, բայց նա միայն դադարգյուն յեղավ... Յեղ դու գիտես արդյոք, թե ում ես պարտական քո ընտանիքի կյանքը:

— Ո՞ւմ:

— Բոյախոնաց Համոյից տղա Գուրգենին:

— Ո՛հ, մայրիկ, յերանի չասեյիր այդ. բաղդը նրան
ուղարկել ե ինձնից վրեժխնդիր լինելու, ինձ հալածելու...
Ել յես չեմ տեսնի իմ հայրենի ոջախը:

Թաթևանովը բարձր ձայնով հեկեկաց ու քշեց յեղ-
ները: Մի քանի րոպեից հետո նրանք իջան բլուրի մյուս
կողմը, և Մերվը հավիտյան ծածկվեց նրանց աչքերից:



Տպ. Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան «Զարյա Վոստոկ» Բուսթավ. պր., 36.

Պատվեր № 1184

Դրուպիտ 962

Տիրաժ 5000,

«Ազգային գրադարան



NL0322772

20 ԿՈՊ

891-540

Կ-6



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՐՖԷԼՍ — ԶԱԿԿԵԼՍ
ԲԱԿԱՆ — ԱՂԵՐՏԵՐՍ
ՅԵՐԵՂԱՆ — ՀԱՅԳԵՐՍ